

որ գիրի առած է, առանց Գալոբ քհ. Կեսարացիի յիշած և Իւորանաղցիի ակնարկած Ամբիթի գումարումը և հոն կատարուած հանգանակութիւնը յիշելու Էնկիթ Խօճա Ամթեցիի կը վերագրէ ամբողջ գործը՝ աստուածային նախախնամութեամբ յարուցուած մէկը ներկայացնելով զայն, սակայն շատ հաւանական է որ անիկա ազգուած էր Գրիգոր Կեսարացիէ:

Ահա թէ Սիմէոն զպիր Լեհացի ինչպէս կը ներկայացնէ գործը:

«Որ ի քվիև Հայոց ՌԾԹ (= 1610), յաւեսան յուշիսի ԺԸ. զարբոյց Տէր Ասուած զունև Ենկի խօճայ Ամթեցի, (այս ինչ)(*) ակուն, որպէս ի հիևն Զորաբարեղ, զոր ևսս մեծաւ հոգաբարձութեանք ջանաց եւ հոգ սարեալ զևսց ի Հայաս փասև սուրբ Երուսաղեմայ պարտոց. եւ ակոյ զտեալ ակվանի խօճայս եւ փճառականս, գրեց եւ այլ մայրաբաղաբան զալ հասանելոյ ի Հայաս, փասև խորհրդոյ ֆնելոյ, թէ որպէս կարիցեն ազատել ի պարտոց զԵրուսաղեմ: Արդ ևնրոզողն ակեանայնի Տէր Յիսուս ևս ինկև

(*) Ը. Ներսէս Ակիմեան անուան համար գասարկ տեղ ձգած է կ'ըսէ եւ կը կարծէ թէ այս անձն նոյն է խօճայ Թումաշանի հետ: Այս կարծիքը չենք բաժնեք, հիմնուելով սա իրողութեան վրայ թէ Յալոբ քհ. Կեսարացի ալ նոյն ձեւով կը յիշէ այս անձը: